

## ՀՐԱԶ ԶԱՏԻՆՅԱՆ

Հայաստանի ազգային ազրարային  
համալսարանի ասպիրանտ

### ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի կամ կառավարության կողմից լիազորած պետական մարմնի հետ համատեղ հաստատված ենթաօրենսդրական ակտերով: Որպես կանոն բանկերը և նրանց գործունեությունը հանդիսանում են պաշտոնական վերահսկողության առավել խիստ ուշադրություն պահանջող դրսոր, քանի ճենարկացության գործունեության որևէ այլ բնագավառ: Բանկերի նկատմամբ նման յուրահատուկ մոտեցումը պայմանավորված է ինչպես ֆինանսական, այնպես էլ տնտեսական կյանքում դրանց ունեցած ակտիվ դերով: Միաժամանակ կարող ենք հաստատել այն իրողությունը, որ բանկային վերահսկողությունն ունի նաև արտահայտված մակրոտնտեսական նշանակություն, քանի որ տարբեր երկրներում գոյություն ունեցող վերահսկողության ռեժիմների և փորձի բազմազանության հիմքում ընկած են ընդհանուր նպատակներ ու դատողություններ: Հատկապես վերահսկողության գործնարկաց իրականացնողները հիմնականում ձգտում են, որպեսզի բանկերը լինեն՝ ֆինանսական տեսակետից ապահով, բարձրակարգ դեկավարություն և ավանդատուների շահերին չպատճենացն: Միջազգային պրակտիկայում ընդունված են նպատակային տարբեր մոտեցումները, որոնք հաշվի են առնում տեղական առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, թե տվյալ երկրի դեկավար մարմինները որքանով են կարևորում բանկային վերահսկողությունն ընդհանրապես: Հատկապես շատ կարևոր է, որ վերահսկողություն իրականացնող մարմինն անկախ լինի քաղաքական կամ այլ արտաքին ներգործությունից, որպեսզի որոշումներն ընդունվեն բանկային վերահսկողության օբյեկտիվ և կարգունքներով: Միաժամանակ ոչ պակաս կարևոր է այնպիսի մեխանիզմի գոյությունը, որի օգնությամբ վերահսկող մարմինները կարողանան հաշվետվություն տալ իրենց կատարած աշխատանքների մասին կառավարությանը կամ խորհրդարանի<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ բանկային համակարգում իր ուրույն տեղի ունի ներքին վերահսկողությունը: Ուստի այդ առումով էլ ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում գործող բանկերում ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ կազմակերպումն արդիական է ոչ միայն զարգացող, այլ նաև արդեն զարգացած շուկայական տնտեսության պայմաններում, ինչի մասին են վկայում բազմաթիվ պետությունների փորձը: Ներքին վերահսկողությունն առևտրային բանկերի գործունեության կարևորագույն գործառույթներից է, որը հնարավորություն է տալիս համապարփակ հսկողություն սահմանել բանկային տարարնույթ ոփակերի նկատմամբ, քանի որ դրանց նվազեցումը ինքնանպատակ չէ, և այն միանշանակորեն պետք է զուգակցվի բանկի եկամտաբերության ապահովման հետ: Ներքին վերահսկողության հիմնական նպատակն է ոչ միայն բանկերի գործունեությանը նպաստող ներդրողների և նրանց հաճախորդների շահերի պաշտպանությունը, այլ նաև վերահսկողության միջոցով բանկի աշխատակիցների օրենսդրական իրավունքների պահպանման և նորմատիվային ակտերին համահունչ գործնարկացների կատարմանը հետևելը, վիճահարույց միջադեպերի և համապատասխան վարքագծի կարգավորումը, այլ նաև բանկում իրականացած գործնարկացների արդյունավետության ապահովումն ու բանկային գործունեության ոփակերի օպտիմալացումը<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ ներքին վերահսկողության համակարգում ներառվում են հետևյալ բաղկացուցիչ տարրերը (տես գծապատկերը): Դրանք են՝

- Վերահսկող միջավայրը,

<sup>1</sup> Իվանյան Ա., Եսայան Տ., Բանկային վերահսկողություն և առողիտ, Երևան, 2003, էջ 10-11:

<sup>2</sup> Банковский Надзор и Аудит, Менъщикова Т.М., 2007 ст. 4-9 .


- կանոնակարգումը (ներքին և արտաքին միջավայր),
- առանձին տեսակի վերահսկողությունը,
- վերահսկող գործունեությունը,
- հատուկ վերահսկողությունը,
- դիտարկումները:

Ներքին վերահսկողության վերաբերյալ ավելի պարզ պատկերացնելու համար բնութագրենք վերոհիշյալներն ըստ առանձին տարատեսակների:

**Վերահսկող միջավայրը** դա ներքին վրահսկողության մնացած բաղադրիչների հիմքն է, որն ապահովում է աշխատակիցների կողմից իրականացվող գործընթացների կառուցվածքը և կարգապահությունը: Իր հերքին ներքին վերահսկողության միջավայրը իր մեջ նաև ներառում է բանկի աշխատակիցների երիկան և կարողությունները, մենեջմենքի (կառավարման) ձևու ու փիլիսոփայությունը, պատասխանատվության և ղեկավարման տարանջատումը, կազմակերպական կառուցվածքը, ղեկավարների ուշադրությունն աշխատակիցների որակավորման բարձրացման վրա և տնօրենների խորհրդի ձևավորումը:

Գծապատկեր

#### Ներքին վերահսկողության համակարգի բաղկացուցիչ տարրերը



Վերահսկող միջավայրում իրենց ուրույն տեղն ունեն՝

- **ղեկավարման քաղաքականությունը և մեթոդները**, որի ենթատեքստում ի նկատի ունենք մենեջմենքի կապն իրականացվող գործընթացների ոխուկի աստիճանի, ֆինանսական հաշվետվություններում կատարվող գրառումների, հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա տարրեր մեթոդներով գնահատումների և տեղեկատվության վերամշակումների հետ:

• **կազմակերպական կառուցվածքը**, ուստի բոլոր տեսակի կազմակերպությունների, այդ թվում նաև բանկերի կողմից իրականացվող գործընթացների նախահիմքն է և, որի հիման վրա էլ պլանավորվում է նրա գործունեության ուղղաձուրյունը՝ նպատակներին հասնելու համար: Կազմակերպական կառուցվածքի բարձր պահանջները բավարարող հիմնական բաղադրիչներն իրենցում ներառում են պատասխանատվությունների և լիազորությունների առանձնացումը, դրանց բաշխումն ու ներքին հաշվետվություններին համապատասխան ուղիների հաստատումը: Բացի դրանցից պատասխանատվությունների և լիազորությունների առանձնացումն իր էությամբ հնարավորություն է ընձեռում, որպեսզի աշխատակիցներն ինքնուրույն սահմանեն իրենց աշխատանքային պարտականությունները՝ պատահականություններից գերծ մնալու համար: Ներքին վերահսկողության միջավայրը շատ դեպքերում սահմանվում է նաև բանկի աշխատակիցների պատասխանատվությունն ապահովող գործառնությունների իրականացման համար<sup>1</sup>:

**Ղեկավարության իրավասությունները**, որոնք հնարավորություն են տալիս ցուցաբերելու խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություն, որպեսզի դրանով իսկ որոշվի անհատի կողմից կատարվող աշխատանքի արդյունավետությունը: Միաժամանակ ղեկավարությունը որոշումներ է ընդունում իրավասության համար, որին պետք է համապատասխանի աշխատակիցը, ուշադրություն դարձնելով մասնագետ պատրաստելու ծախսերի և ազատ գործելու հնարավոր մակարդակի վրա: Իրենց հերքին իրավասությունը և ազատ գործակերպն իրենց դրական դերակատարումն ունեն վերահսկողության գործընթացում:

Վերահսկող միջավայրն իր գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար **կանոնակարգման** առումով ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին նորմատիվային փաստաթղթերի ընդունման և համապատասխանեցման կարգավորումը:

**Առանձին տեսակի վերահսկողություն**, որը կապված է բանկի վարչական, հաշվապահական, ֆինանսական, իրավական, տեղեկատվատեխնոլոգիական և համակարգչային ստորաբաժանումների հետ: Ըստ այս վերահսկողության, բանկային գործունեության կարգավորման առումով, կարեորվում է վերոհիշյալ ստորաբաժանումների փոխկապվածությունները:

**Վերահսկող գործունեությունը**, որը կարգավորում է ներքին վերահսկողության համակարգի առանձին բաղադրիչների փոխազդեցության և դրանց գործունեության գործընթացը: Նախ անհարաժեշտ է նշել, որ ներքին վերահսկողությունը իր գործունեության շրջանակներում գործող անկախ գործունեության տեսակ է, որի առաջնային խնդիրներից են հանդիսանում ռիսկերի բացահայտումը, որում գտնված է բանկը (ինչպես ֆինանսական, այնպես էլ հեղինակային առումով), գոյություն ունեցող ռիսկերից պաշտպանվածության ապահովումը և վերջինիս պարբերաբար վերանայումը: Կարևոր է գնահատել նաև, թե արդյոք կան համապատասխան վերահսկողական հնարավորություններ առաջարկված նպատակներին հասնելու համար, ինչպես նաև ապահովել համապատասխան միջոցառումներ, որպեսզի ներքին վերահսկողական համակարգն աշխատի արդյունավետ<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր գործունեություն առաջնորդված է համապատասխան սկզբունքներով, այդ թվում նաև բանկերի համար՝

- ներքին վերահսկողությունը պետք է լինի շարունակական գործընթաց, որն իրականացվում է բանկի ղեկավարների և ամբողջ աշխատակազմի կողմից,
- ներքին վերահսկողությունը պետք է նպաստի բանկերի, նրանց հաճախորդների և ներդրողների շահերի պաշտպանությանը, բանկի գործունեության ընթացքում անձնակազմի կողմից օրենսդրության ու նորմատիվ ակտերի պահպանմանը, իրականացվող գործառնությունների ապահովմանն ու բանկային գործունեության հետ առնչվող ռիսկերի նվազեցմանը,

<sup>1</sup> Белуха Н.Т. «Аудит», М. 2000, ст. 156-158.

<sup>2</sup> Суц В.П. Закарая Ж.В. Внутренний контроль в коммерческом банке, Москва 1998, ст. 9-56.

- Աերքին վերահսկողության գործունեությունը պետք է լինի անկախ այլ ստորաբաժանումների աշխատանքից, որն անմիջապես կառավարում է բանկի դեկավարը կամ դեկավարությունը:

Վերահսկող գործունեությունը իր էությամբ ներառում է ինչպես հատուկ վերահսկողությունը, այնպես Էլ վերահսկող գործընթացների իրականացումն աշխատակիցների կողմից՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում: Իր կարևորությամբ **Խասոուկ վերահսկողությունը** լինելով վերահսկող գործունեության բաղադրիչներց մեկը, իրականացնում է ինչպես աշխատակիցների կողմից առանձին գործառնությունների կատարման և ծառայությունների մատուցման, այնպես Էլ ստացված ֆինանսական արդյունքների և ակտիվների վիճակի ստուգում: Հատուկ վերահսկողությունը հիմնված է ներքին առողիտի կողմից իրականացվող աշխատանքների վրա:

Բանկերում ներքին վերահսկողական համակարգն իրեն ավելի արժանահավատ դրսերելու համար կարևորվում է **ոփոստիկան (մոնիթորինգ)** անցկացումը, որով բնութագրվում է առողիտի արդյունավետ ստուգումը և գնահատումը նրա ժամանակային գործունեության ընթացքում: Դիտարկման գործընթացում ստուգումն իրականացվում է երկու փուլով: Դրանցից առաջինի դեպքում իրականացվում է կառավարիչների գործունեության օպերատիվ ստուգում, իսկ երկրորդի դեպքում առանձին ստուգման արդյունքների գնահատում:

Բացի վերոհիշյալներից իր որույն տեղի ունի նաև **գործառնական ստուգումը**, որն իրականացվում է անձնակազմի կողմից իրենց ամենօրյա պարտականությունները կատարելու ժամանակ: Այդ գործընթացում առանձին գնահատականներ ի հայտ են գալիս գործառնական ստուգման ժամանակ արդյունավետության և ոխսկի գնահատման հետ կապված: Վերահսկողության գնահատականն ի հայտ է գալիս ինչպես առողիտի ժամանակ ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության անհուսալիության ռիսկի սահմանելու, այնպես Էլ այդ միջավայրին համապատասխան անցկացվող հաշիվների մնացորդների ստուգման վերահսկողության գործընթացների ժամանակ:

Անհրաժեշտ է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ բանկում հաշվառում վարելիս ներքին ստուգման պայմաններից մեկը, կատարողական և վերահսկողական գործառույթների հատակ տարանջատումն է: Բանկն իրականացնում է նախնական և հաջորդական ստուգումը իր կողմից իրականացվող գործառնությունների գծով: Եթե իրականացվում է նախնական ստուգում, ապա բանկային գործառնությունները վերահսկվում են դրանց իրականացման պահին կամ մինչև այդ պահը: Բանկի կողմից իրականացվող գործառնությունների մեծամասնությունը ենթական են բանկային ստուգման՝ կապված դրամարկղային, ավանդային, վարկային, հաշվարկային և նմանատիպ այլ գործընթացների հետ:

Այսպիսով, ընդհանրացնելու համար պետք է նշել, որ ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, այդ թվում նաև բանկերն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսական և բանկային առանձնահատկություններին բնորոշ իրավական ու հաշվառման միջավայրում: Ուստի վերջիններս անհրաժեշտ են ոչ միայն բանկային վերահսկողության արդյունավետ կազմակերպման, այլ նաև բանկերի համար ներքին վերահսկողության կարգավորման մեխանիզմների մշակման և իրենց ֆինանսական խնդիրները լուծելու առումով:

## ՀՐԱԶ ԶԱՏԻՆՅԱՆ

## Հայաստանի ազգային ազքարային համալսարանի ասպիրանտ

Համառոտագիր

Համաշխարհային փորձը վկայում է, որ տնտեսավարման գործնթացում իր ուրույն տեղն ունի բանկային համակարգը, որի գործունեությունը պայմանավորված է ներքին վերահսկողության մեխանիզմների կիրառումնով: Վերջիններին նպատակն է ապահովել բանկի անվտանգ և արդյունավետ աշխատանքը: Ներքին վերահսկողությունն է, որ իր գործունեության ընթացքում օգտագործում է կազմակերպման սեփական մերուները և մոնիթորինգի գործնթացը, ենելով բանկի քաղաքականությունից:

**Քանակի բառեր.** բանկային ներքին վերահսկողություն, կարգավորման մեխանիզմներ, վերահսկող միջավայր, վերահսկող գործունեություն, դիտարկում, ներքին առողջություն:



## THE MECHANISMS OF REGULATING INTERNAL CONTROL IN BANKS

HRACH CHATINYAN

*Ph.D. Student*

Armenian National Agrarian University

### Abstract

The international best practices show that the banking sector plays a unique role in economic processes: the performance of banking sector is attributed to utilization of internal control mechanisms. The objective of the latter one is to ensure efficient and safe bank performance. The internal control utilizes own organizational methods and monitoring processes by relying on bank policy.

**Keywords:** bank internal control, regulation mechanisms, control environment, controlled activity, monitoring, internal audit